



# Կենսաբանական ԿՈԼՈՔԿԻՈՒՄ

Հինգշաբթի | 14 Ապրիլի 2022 | 15:00

ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ

## Արսեն Առաքելյան

ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ  
Հայ-Ռուսական համալսարանի կենսաբժշկության և  
դեղագիտության ինստիտուտ  
Հայաստանի կենսաինֆորմատիկայի ինստիտուտ

Ելույթի թեման`

### Գենոմիկա և կենսաինֆորմատիկա. մեծ տվյալներից դեպի հիմնարար գիտելիքներ և նորարարական մշակումներ

Գենոմիկան և կենսաինֆորմատիկան այն բեկումնային ոլորտներն են, որոնք այսօր ընկած են կենսաբժշկության, կենսատեխնոլոգիայի և դեղագիտության ոլորտներում համարյա բոլոր գիտական հայտնագործությունների և նորարարական մշակումների հիմքում: Գենոմային ծրագրերը բազմազանության սպեկտրը ներառում է կենդանական աշխարհի բոլոր թագավորությունները, հնագույն և ժամանակակից նմուշները, բժշկագիտությունից մինչև գյուղատնտեսություն և միտված են պատասխանելու բազմաբնույթ գիտական հարցերին: Գենոմային հետազոտությունները ծրագրերը գեներացնում են հսկայական տվյալների ծավալներ, որոնց պահպանումը և վերլուծությունը պահանջում է մաթեմատիկայի, տվյալագիտության, մեքենայական ուսուցման և համակարգչային գիտությունների ոլորտի ստեղծագործական մոտեցումներ: Կենսաինֆորմատիկան զբաղվում է հենց այս խնդիրներով: ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտում իրականացվում են մի շարք գենոմային ծրագրեր` ուղղված մարդու բազմագործոն հիվանդությունների, քաղցկեղների զարգացման մեխանիզմների ուսումնասիրությունը, կորոնավիրուսի մոլեկուլագենետիկական բնութագրման, մանրէների հակաբիոտիկակայունության գենետիկական հիմունքների հետազոտությանը, խաղողի գենետիկական ռեսուրսների անձնագրավորմանը, հայերի ծագումնաբանությանը և Հայկական լեռնաշխարհի պալեոֆլորայի և պալեոֆաունայի վերականգնմանը: